Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

27-34.6-Մ6-41 Մասնագետ(2023-10-31)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

Ներքին գործերի նախարարություն | Փաստաթղթաշրջանառության ապահովման վարչություն | Փաստաթղթաշրջանառության ապահովման բաժին | Մասնագետ, (27-34.6-Մ6-41)

1.2 Ենթակա և հաշվետու է

Մասնագետը անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի մասնագետներից մեկը:

1.4 Աշխատավայր

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, ք. Ալավերդի, Թումանյան 3

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. օժանդակում է պետական և այլ մարմիններից Նախարարությանը և նրան ենթակա պետական մարմիններին հասցեագրված ոչ գաղտնի փաստաթղթերի (այսուհետ՝ փաստաթղթեր) հաշվառման և ըստ մակագրության համապատասխան հասցեատերերին առաքման աշխատանքներին.
2. օժանդակում է Նախարարի և Նախարարությանն ենթակա պետական մարմինների ղեկավարների կողմից ստորագրված ոչ գաղտնի իրավական ակտերի հաշվառման, պահպանման, բազմացման և առաքման աշխատանքներին.
3. օժանդակում է՝ Նախարարությանը և նրան ենթակա պետական մարմիններին հասցեագրված ոչ գաղտնի իրավական ակտերի, փաստաթղթերի հաշվառման աշխատանքներին.
4. օժանդակում է Նախարարությունում քաղաքացիների դիմումների, բողոքների և առաջարկությունների հաշվառման, թվայնացման, ըստ մակագրության կատարողներին փոխանցման աշխատանքներին.
5. օժանդակում է արխիվային փաստաթղթերի սահմանված կարգով պահպանման, օգտագործման, տրամադրման և փաստաթղթերի արխիվ հանձնման ու դրանց արխիվացման աշխատանքներին.
6. օժանդակում է գործավարության կարգի պահանջներին համապատասխան Նախարարությունից առաքվող և Նախարարություն մուտքագրվող փաստաթղթերի, նամակների և դիմումների փաստաթղթաշրջանառության իրականացման աշխատանքներին:

Իրավունքները.

- ծանոթանալ արխիվային փաստաթղթերի փորձագիտական արժևորման, փաստաթղթերի ապահովագրման ֆոնդի ստեղծման և պահպանման աշխատանքներին.
- ծանոթանալ Նախարարության և նրան ենթակա պետական մարմինների մշտական և ժամանակավոր պահպանման ենթակա գործավարությամբ ավարտված փաստաթղթերի արխիվացման գործընթացին.
- ուսումնասիրել Նախարարությանը և նրան ենթակա պետական մարմիններին հասցեագրված ոչ գաղտնի իրավական ակտերի, փաստաթղթերի հաշվառման աշխատանքները:

Պարտականությունները.

- պատճենահանել պահանջվող արխիվային փաստաթղթերը.
- ուսումնասիրել գործող օրենսդրությանը համապատասխան իրավական ակտերի նախագծերի պատրաստման գործընթացը.
- աջակցել Mulberry փաստաթղթաշարժի էլեկտրոնային համակարգի միջոցով ոչ գաղտնի փաստաթղթաշրջանառության, ինչպես նաև ոչ գաղտնի գործավարության աշխատանքներին.
- հավաքագրել ոլորտը կանոնակարգող անհրաժեշտ նյութերի փաթեթ՝ իրավական ակտերի մշակման և լրամշակման համար.
- հավաքագրել գրություններով պահանջվող արխիվային փաստաթղթերի պատճեններն ու պատասխան գրությունները.
- համագործակցել համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարի հետ:

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

ԱՌՆՎԱԶՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Աշխատանքային ստաժ չի պահանջվում:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
  - Բարեվարքություն
  - Հաշվետվությունների մշակում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Ժամանակի կառավարում

- Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներ

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում է տվյալ մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև տվյալ մարմնից դուրս որպես ներկայացուցիչ շփվում է պատվիրակված լիազորությունների շրջանակներում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում մասնակցում է մասնագիտական խնդիրների բացահայտմանը և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն: